

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 8**

**«Հ Լոռու մարզպետի մոտ կայացած խորհրդակցության**

**13.03.2019թ.**

**ք.Վանաձոր**

**Մասնակցում էին**

- Վ.Խաչատրյանը - գլխավոր քարտուղարի պաշտոնակատար  
Ա.Բեջանյանը, Ա.Մխիթարյանը, Ա.Մատինյանը, Ա.Ջանազյանը, Դ.Մանուչարյանը, Ա.Դեմիրճյանը,  
Ա.Օհանյանը, Լ.Բերոյանը, Ա.Սահակյանը, Ա.Աղլոյանը, Ս.Ղուբաթյանը, Հ.Հակոբյանը,  
Ն.Համբարձումյանը, Հ.Մկրտչյանը - ստորաբաժանումների ղեկավարներ և այլ պաշտոնատար  
անձինք  
Լ.Ասլանյանը -մարզպետի խորհրդական  
Լ.Տեր-Սիմոնյանը -մարզպետի խորհրդական  
Գ.Մարկոսյանը - մարզպետի օգնական  
Ռ.Խանզադյանը -մարզպետի օգնական

**Օր ա կ ա ր գ ու մ`**

1. Նախորդ շաբաթվա ընթացքում կատարված աշխատանքների ամփոփում

/Ջեյ. գլխավոր քարտուղարի տեղակալ,  
ստորաբաժանումների ղեկավարներ/

2. Մարզպետարանի ստորաբաժանումների առաջիկա շաբաթվա ընթացքում  
կատարվելիք աշխատանքների մասին

/Ա.Ղուկասյան/

3. Այլ հարցեր

**Հ ա ն ձ ն ա ր ա ր վ ե ց**

1. **«Հ Լոռու մարզպետարանի աշխատակազմի հողաշինության և հողօգտագործման բաժնի պետ Ա. Օհանյանին`**

ա) Մեկշաբաթյա ժամկետում ամփոփել և ներկայացնել տեղեկատվություն ու առաջարկություններ ԱԳԼՃԿ-ներում ձեռնարկված միջոցառումների վերաբերյալ.

բ) Անհրաժեշտ հսկողություն սահմանել համայնքների ղեկավարների կողմից հողերի վարձակալության և աճուրդով տրամադրման դեպքում հայտարարությունները նաև մարզպետարանի միջոցով տարածելու նկատմամբ.

գ) Անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել համայնքների կողմից ճիշտ քարտեզագրում իրականացնելու և դրանցով առաջնորդվելու ուղղությամբ: Ըստ անհրաժեշտության դիմել համապատասխան մարմիններին:

**2. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության գյուղատնտեսության բաժնի պետ՝ Ա.Շահվերդյանին՝**

Ներկայացնել տեղեկատվություն կոլեկտորա-դրենաժային համակարգերի շահագործման վերաբերյալ:

/Ժամկետ՝ 1 շաբաթ/

 Invalid signature

X 

ԱՆԴՐԵՅ ՂՈՒԿԱՍՅԱՆ

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ա. ՂՈՒԿԱՍՅԱՆ

Արձ. Ս. Մակարյան

Հեռ. 0322 /4-32-99/